խնամով հոգայ գաղթելոց կարևոր պէտքերը։ Ա-զովի գաւառապետը 6000 սայլեր կը ղրկէ նոցա կարասիքը վերցընելու։ Եկատերինեսլաւ գաւառը կը սահմանուի գաղթական քրիստոնէից տեղի բնակութեան. ցունաց՝ Ազովու ծովուն եղերքը, ուր կը շինեն Մարիամպոլ քաղաքը. Հայոց լուսաւորչականաց՝ Դոն գետին հիւսիսային ափանց վրայ, ուր է այժմ Նախիջևան քաղաքը. Հայոց Կաթոլիկաց՝ որք սակաւաթիւ եղած են, բնակութիւն կը սահմանի գաւառին համանուն Եկատերինեսլաւ քաղաքը, ուր ապա գաւառապետն կը նստի, և այժմ է մեծ քաղաք Տներեր գետոյն վրայ։ Գաղթականաց առաջին խումբն կը մեկնի 'ի Ղրիմէ յ18 յուլիսի (1778), երկրորդն 'ի 20 օգոստոսի, երրորդն որ և վերջինն 'ի 28 սեպտեմբերի։

Կը մեկնին, այո՛, հայկազունք 'ի Ղրիմէ, իրենց դարևոր հայրենիքէն, այլ մինչև որ կանակնին դարձընեն, և դէպ 'ի հիւսիս առաջ վարեն ճամբանին, ինչ կը կրէ, ինչ կը զգայ այդ տարաբաղդ ժողովուրդն։ Մինչև ցայժմ գտնուած չէ հայ գրիչ մի, որ ստորագրէ մանրամասն այդ աղեխարշ բաժանումը, որ անշուշտ կարի՛ սրտառուչ եղած պիտի լինի։

Վերջին անգամ կը ժողովին Հայք իրենց եկեղեցեաց մէջ, զորս ամենայն խնամքով իրենք և իրենց նախնիք ամրակուռ շինած են, այնպէս որ իբրև ցյաւիտեանս ժամանակաց որդւոց որդի պիտի վայելեն զանոնք. որոց ամէնն ունին իրենց սրբազան և պատմական նշանակութիւնը. Ս. Խաչ և Ամենափրկիչ վանքեր, սպաստանարան սրբասէր արեղայից և դպրասէր գրչաց. Զարխափան և Ս. Կարապետ, որ այլազգենից մէջ՝